

ԳՐԱՑԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԵՐԵՆ ԿՐԿՆԱԳԻՐ ՁԵՌԱԳԻՐԸ

ԷՐԻԽ ՌԵՆՀԱՐՏ (Ավստրիա)

Գրացի (Ավստրիա) համալսարանի գրադարանը հարուստ է արևելյան ծագում ունեցող ձեռագրերով: Փոքր հավաքածուն չորս վրացերեն ձեռագիր, հայերեն գրված մի փաթեթ, երեք առանձին թերթ և երկու մագաղաթյա թերթ¹, մինչ այժմ առանձնապես հետաքրքրական չի թվացել: Բավական վաղ բացահայտվել է այս աղբյուրներից հնագույնի (2058/1)՝ IV դ. թվագրվող վրացական 27 թերթանոց ճաշոցի նշանակութունը²: Որոշ առումով այդ կարևոր և չափազանց ուշագրավ ձեռագրի ստվերում է մնում UGB, № 2058/2 կրկնագիր ձեռագիրը: Բավական տեղեկութուններ կան այս ձեռագրի հայտնաբերման և ձեռքբերման մասին: Սանկտպետերբուրգի վրացի լեզվաբան Ա. Յազարելին, 1883 թ. Առաջավոր Արևելքում իր կատարած ճամփորդութան ժամանակ, այն գտել է Սինայի թերակղզու Ս. Կատարինեի վանքում և նկարագրել³: 1895 թ. Կահիրեի հնությունների շուկայում ձեռագիրը գնել է նկարիչ Լեոպոլդ Միլիխը († 1924): Որևէ տեղեկութուն չկա այն մասին, թե ինչ հանգամանքների բերումով է ձեռագիրը հայտնվել այնտեղ⁴: Հետագայում այն առաջարկել են գնել Ավստրիայի Ազգային գրադարանին, որը, սակայն, մերժել է՝ սլատառաբանելով, թե ձեռագիրը, հնարավոր է, կասկածելի առք ու վաճառքի առարկա է եղել⁵: Ի վերջո, 1897 թ. այն իր միջոցներով գնել է գրացի լեզվաբան Հուգո Շուխարզը († 1927): Նրա մահից հետո ձեռագիրը հայտնվել է Կարլ-Ֆրանցենի համալսարանի գրադարանում:

Ձեռագիրը պարունակում է 282 մագաղաթյա թերթ, որոնք կազմում են 36 պրակ: Առաջին սրակը բաղկացած է միայն երկու երկծալ թերթից (1-4),

¹ A. K e r n. Die Handschriften der Universitätsbibliothek Graz. Bd. 2, 1956, 410f.

² Ա. Շ ա ն ի ձ ե. Գրացի վրացերեն ձեռագրերը. — Թբիլիսիի համալսարանի տեղեկագիր, IX (1929), էջ 310-353 (վրացերեն), H. S c h u c h a r d t. Mitteilungen aus georgischen Handschriften. — Bulletin de l'universite de Tiflis, VIII (1928), S. 347-376; G. P e r a d z e. Über die georgischen Handschriften in Österreich. — Zeitschrift für die Kunde des Morgenlandes, XLVII, Bd. 3/4, S. 219-232; W. I m n a i s c h w i l i. Die altgeorgischen Handschriften in der Universitätsbibliothek Graz, Die Universität Graz. Jubiläumsband, Graz, 1977, S. 186-189.

³ Յավոք, Սինայի վրացական ձեռագրի՝ Յազարելիի նկարագրութունը չափազանց համառոտ է և անբավարար, և հստակ հասկանալի չէ, թե որ ձեռագրի մասին է խոսքը (G. P e r a d z e. Նշվ. աշխ., էջ 221, ծանոթ. 1):

⁴ Պերածեի դիտողութունն այն մասին, թե «այն կարող էր տարած լինել մի ճանապարհորդ [Սինայից]» (G. P e r a d z e. Նշվ. աշխ., էջ 221), փաստարկված չէ, սակայն ճշմարտանման է:

⁵ Հմմտ. W. I m n a i s c h w i l i. Նշվ. աշխ., էջ 187:

իսկ մնացած պրակները՝ քառածալ թերթերից (ութական թերթ, 5-282)⁶: Ձեռագրի չափերն են՝ 137 x 112 x 90 մմ: Կազմը⁷ մասամբ մաշված է, ձեռագրի ողջ կոնակը մերկ է, կազմի վերին մասը փակցված է միայն առաջին պրակին, թիկունքը վատ է ամրացված. կարր միայն մասամբ է պահպանվել: Շատ պրակներ պոկված են իրենց տեղից: Թերթերի գերակշիռ մասը, հատկապես գրանց եզրերը, կրում են օգտագործման և աղտոտման հետքեր: Առանձին թերթեր պատուված են: 98-րդ թերթի պատուվածքը կարված է անփորձ ձեռքով: 23-րդ թերթի վրա երևում են մագաղաթը մեկ ուրիշ՝ հունարեն երկաթագիր (*Majuskel*) տեքստ պարունակող մագաղաթի օգնութամբ վերանորոգելու հետքեր: Այնուամենայնիվ, ձեռագիրն ընդհանուր առմամբ լավ վիճակում է, եթե հաշվի առնենք դրա հնութունը:

Ձեռագիրը կրկնագիր է (պալիմփսեստ), ինչն անգնն աչքով նկատելի է շատ թերթերի վրա: Սկզբնական հայերեն տեքստը ջնջվել է, և նոր տեքստ է գրվել: Նոր տեքստը վրացերեն է: Ձեռագրացուցակներում և գրականութային մեջ ձեռագիրը հիշատակված է բացառապես որպես վրացական: Վրացերեն տեքստը բազմիցս ընթերցվել և նկարագրվել է: Դա սաղմոսարան է⁸: Մինչդեռ նախնական հայերեն տեքստը մինչ օրս բավարար ուշադրություն չի արժանացել⁹: Դրա ընթեռնելիության աստիճանը տարբեր կերպ է գնահատվել: Վ. Իմնաիշվիլին հայերեն տեքստը բնութագրում է որպես դժվարընթեռնելի¹⁰: Իսկ Ա. Քերնի ցուցակում արված է հետևյալ լակոնիկ նշումը. «Սաղմոսարան. *Codex rescriptus*, որի տակ գտնվում է լավ ընթեռնելի հայերեն տեքստ»¹¹: Ձեռագրին տրված հակասական այս գնահատականը ցույց է տալիս, թե որքան քիչ են զբաղվել կրկնագրի մանրամասներով, քանի որ իրականում սկզբնական հայերեն տեքստում կան և՛ հստակորեն ընթեռնելի, և՛ բոլորովին անընթեռնելի հատվածներ:

⁶ Անկանոնութուններ, որոնք կարող են շփոթություն առիթ տալ, հանգիպում են ինչպես էջակալման (քանի որ 20-րդ թերթին հետևում են երկու 21-րդ թերթ), այնպես էլ թերթերի դասավորության մեջ, քանի որ չորրորդ պրակը (28-34) բաղկացած է միայն յոթ թերթից. այն թերթի երկրորդ կեսը, որի վերին մասն այժմ էլ 31-ն է, ներկայիս էջակալումից առաջ կտրված է եղել և բացակայում է:

⁷ J. A. S z i r m a i. *The Archaeology of Medieval Bookbinding*, Aldershot, England and Brookfield, Vermont, p. 68-80.

⁸ Տե՛ս հատկապես G. P e r a d z e. Նշվ. աշխ., էջ 220, ծանոթ. 2. «Այդ ձեռագիրն ինձ չափազանց հետաքրքրում էր, և ես այն ուսումնասիրելու համար 1937 թ. գնացի Գրաց, սակայն, ցավոք, ինձ հիասթափություն էր սպասում: Ես համեմատեցի առաջին տասնութ սաղմոսը հրատարակված վրացական սաղմոսարանի հետ և չնկատեցի բնագրագիտության կամ սաղմոսների տեքստի պատմության համար կարևոր որևէ տարբերություն»: Վերջերս, մոտ երկու տարի առաջ, ձեռագրին տեղում ծանոթացել է Վ. Իմնաիշվիլին: Գրացի համալսարանում այժմ իրագործվում է վրացական ողջ ֆոնդի թվայնացում:

⁹ Հայերեն տեքստին առաջին և միակ անդրադարձը Մխիթարյան Հայր Ոսկյանի Հպանցիկ երկէջանոց նկարագրությունն է (Հ. Հ. Ո ս կ ե ա ն. Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց որ ի Հանգէս ամսօրեայ. — «Հանդես ամսօրեայ», 1898, էջ 312: Նշված է է, թե ձեռագրի քանի էջ է ընթերցվել: Այնուամենայնիվ, տասներկու էջի բովանդակությունը նկարագրված է, և Մխիթարյան հայրը գրում է, որ ինքը գուտ ծաղկաքաղ է ներկայացրել (նույն տեղում): Բոլորովին վերջերս, իր հանկարծակի վախճանից առաջ, պրոֆ. Միշել վան Հսբրուկն ուսումնասիրել է ձեռագիրը և ընթերցել հայերեն տեքստի որոշ հատվածներ: Այդ մասին մենք տեղեկացանք նրա հետ մանրամասն զրույցի ընթացքում:

¹⁰ W. I m n a i s c h w i l i. Նշվ. աշխ., էջ 188:

¹¹ A. K e r n. Նշվ. աշխ., էջ 410:


Այսինքն առ այսօր որևէ հետազոտող լրացված հին տեքստը, բացառությամբ մի քանի դյուրընթեռնելի հատվածների, չի ուսումնասիրել, էլ չենք խոսում սիստեմատիկ ընթերցման մասին:

Ինչպես վերն ասվեց, ավելի քան հարյուր տարի առաջ հայերեն տեքստի բովանդակությունը պարզելու առաջին փորձը կատարվել է «Հանդես ամսօրյա»-ում հրատարակված հոդվածում: Ըստ հոդվածագրի, այն Հովհաննեսի Ավետարանն է, բայց ոչ ամբողջական¹²: Մեր կիսամյա ընթերցման ընթացքում, սակայն, պարզվեց, որ Հովհաննեսի Ավետարան նեղ բնորոշումը չի պատասխանում այն հարցին՝ արդյո՞ք գործ ունենք Աստվածաշնչի, թե՞ ծիսական մի ձեռագրի հետ, արդյո՞ք դա Ավետարան է, թե՞ բոլորովին այլ մի բան: Բովանդակությունն ավելի ճշգրիտ որոշելու համար անհրաժեշտ է նշել մի առանձնահատկություն, որն աչքի է զարնում առաջին իսկ ընթերցման ժամանակ. կան լրիվ տեքստով ծածկված էջեր, սակայն կան էջեր էլ, որոնք ունեն ընգամենը մեկ կամ երկու տող, երբեմն էլ՝ սոսկ երկու կամ երեք բառ: Ինչպե՞ս կարելի է այս բոլորը միասին բնորոշել որպես Ավետարան, երբ պետք է նախ պարզել՝ արդյո՞ք գործ ունենք շարունակական տեքստի, թե՞ հատվածների հետ:




Նկ. 1ա. 278բ:

¹² Հ. Հ. Ո ս կ Ե ա ն. Մայր ցուցակ, էջ 312:



Նկ. 1բ. 279ա. սկզբնապես 278բ–279ա-ն կազմել են մեկ թերթ:



Նկ. 1գ. սկզբնական թերթի սխեմատիկ պատկեր:

Հայերեն տեքստի առանձին էջեր միատեսակ ձևավորում ունեն. վերին կեսը միշտ ներկայացնում է մեկ կամ մի քանի տուն Հովհաննեսի Ավետարանից: Չորսից քսաներկու տողանոց այդ հատվածին հետևում է ավելի կամ սլակաս երկարությամբ մի պարբերություն: Էջի ստորին կեսում սովորաբար մեկ-երկու տողանոց կարճ մի հատված է, երբեմն մեկ-երկու բառ էլ՝ երրորդ տողում: Էջը թերթիով գտնում ենք, դարձյալ վերին մասում, սուրբգրային տեքստի շարունակությունը (տե՛ս նկ. 1 ա-գ):

Կարևոր է այն հարցը, թե ինչպիսին է ներքևում գետեղված համառոտ տեքստի և վերևի ավետարանական հատվածի հարաբերությունը: Թերթերի ստորին մասի համառոտ նշումները պարունակում են բառեր և հասկացություններ, որոնք համարյա չեն հանդիպում Հովհաննեսի Ավետարանում: Դրանք չեն կարող լինել ավետարանական գրվագների վերապատումներ կամ մեկնություն, ինչի համար այդ մեկ-երկու բառը բավական չեն: Ավելի շուտ տպավորություն է ստեղծվում, որ հետագայում ջնջված հայերեն տեքստը դրողը Հովհաննեսի Ավետարանից մեջբերված հատվածների վերաբերյալ արել է ասացվածքային բնույթի նշումներ, որոնք հեռավոր առնչություն ունեն դրանց հետ (տե՛ս ստորև): Հայերեն հին ձեռագիրը բոլորովին գուրկ է եղել նկարագարողումից¹³: Միայն գլխատառերն ավելի խոշոր են գրված: Գույնով ընդգծված տառեր նույնպես նկատելի չեն: Հիմնական տեքստի վերևում, մոտավորապես տողի կենտրոնական մասում, հաճախ կարելի է կարդալ որևէ թիվ, բնական է, տառերով գրված: Այդպիսի թվեր պետք է որ եղած լինեին բոլոր թերթերի ինչպես «ա», այնպես էլ «բ» կողմում: Որոշ դեպքերում դրանք բծախնդրորեն ջնջված են կամ էլ այլևս նկատելի չեն աղտոտման, կամ ձեռագրի համալրված վիճակի պատճառով: Այնուամենայնիվ, բավական քանակությամբ թվեր հստակ տեսանելի ու ընթեռնելի են, այնպես որ կարելի է հասկանալ աստվածաշնչական տեքստը մեջբերելու եղանակը:


Նախնական հայերեն ձեռագրի ամբողջական վերականգնմանն օժանդակում են երկու գործոն՝ առանձին աստվածաշնչային հատվածների համարակալումը (երբեմն թերթի «ա» կամ «բ» կողմում այդ թիվը դեռ ընթեռնելի է)¹⁴ և պրակների վերջին թերթերի վրա պատկերված փոքր խաչերը¹⁵: Այն թերթերը, որոնց վրա հատվածի համարն այլևս տեսանելի չէ, կարող են դասավորվել Ավետարանի տեքստի բովանդակային հերթականությունից հիման վրա: Բոլոր թերթերի աստվածաշնչային հատվածները ճանաչելի են, նույնիսկ այն դեպքերում, երբ նախնական տեքստի միայն չնչին մնացորդներն են նշմարվում: Վրացերեն կրկնագրի համար օգտագործվել են միայն այս հայկական ձեռագրի թերթերը¹⁶:

¹³ Միայն մեկ էջում (21 ք) վերին՝ հիմնական, և ստորին տեքստերի միջև կա մի «զարգ» խաչ, որի ուղղահայաց գծիկը երկու ծայրերում ունի հորիզոնական կարճ գծիկներ:

¹⁴ Քանի որ յուրաքանչյուր էջի վրա կա աստվածաշնչային մեկ հատված, և հատվածների հերթականությունը հետևողական է, փաստորեն, հատվածների համարները դառնում են էջահամարներ:

¹⁵ Առաջին պրակի առաջին քառածալ թերթը առաջանվել է (59-66): Այդպիսի նշումներ նկատելի են 59ա (հատված 1), 76ա (հատված 31), 78ա (հատված 47), 25ա (հատված 63), 58ա (հատված 79), 142ա (հատված 111), 110ա (հատված 127), 146ա (հատված 143), 240ա (հատված 159), 166ա (հատված 191), 224ա (հատված 207), 278ա (հատված 223), 234ա (հատված 239), 200ա (հատված 255) էջերի վրա: Նշանը միշտ թերթի «ա» կողմում է, իսկ հատվածի համարը տասնվեցի բազմապատիկն է՝ հանած 1. միայն առաջին պրակում է նշանն առաջին դրված թերթի վրա, քանի որ ակնհայտորեն դրան ոչ մի թերթ չէր նախորդում:

¹⁶ Պետք է նկատի ունենալ, որ վրացերեն ձեռագրի առաջին չորս քառածալ թերթերը հետադառնում են ավիլացի. դրանք կրկնագիր չեն:



Նկ. 2. 12-րդ պրակի վերականգնման սխեմատիկ պատկեր (հատվածներ 177–192 = Յուլհ. ԺԱ 16–ԺԲ 2):

Հայերեն ձեռագրի բոլոր երկծալ թերթերը (կես-քառածալները) նախ հանվել են կազմից: Այնուհետև տեքստը լվացվել է¹⁷: Դրանից հետո երկծալ թերթերը կտրվել են ծալքի երկայնքով և կիսվել: Այժմյան կիսատված երկծալ թերթերը 90 աստիճանով շրջվել են, նորովի տողատվել¹⁸: Այնուհետև թերթերը ծավվել են, և նոր պրակներ են կազմվել՝ չորս երկծալ, այսինքն՝ ութ թերթից բաղկացած: Թերթերը կարվել են, նոր գիրք է կազմվել, և վրան նոր տեքստ է գրվել: Եթե ճիշտ է, որ խաչերով նշված են պրակները, ինչը շատ հավանական է թվում, ուրեմն նախնական Հայերեն ձեռագիրը բաղկացած է եղել քսան պրակից: Յուրաքանչյուր պրակի մեջ եղել է ութ թերթ կամ չորս երկծալ թերթ՝ ընդամենը 160՝ երկու կողմից գրված թերթ: Հետևաբար, պետք է ենթադրել, որ եղել է 318 աստվածաշնչային հատված¹⁹, եթե ընդունենք, որ քսաներորդ պրակի վերջին թերթը եղել է մաքուր կամ էլ այլ տեքստ է պարունակել²⁰: Իհարկե, չի կարելի բացառել, որ նախնական ձեռագրում եղել են և այլ նյութեր: Սակայն պահպանված կրկնագիր թերթերում դրա ոչ մի նշան չկա: Հայերեն ձեռագրի՝ տեքստ պարունակող 23 թերթ այստեղ չեն օգտագործվել: Նախնական

¹⁷ Ձեռագրի ոչ մի մասում նկատելի չեն քերիչի հետքեր, սակայն կան նախնական թափաքի բաց կարմրավուն բծեր:
¹⁸ Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչու է Հայերեն տեքստի ներքին լուսանցքը փոքրացել: Հավանաբար, նախնական կարի անցքերը կտրվել են:
¹⁹ Ցավոք, վերջին երկու հատվածները (317 և 318) պարունակող՝ քսաներորդ պրակի յոթերորդ թերթը չի պահպանվել:
²⁰ Դժբախտաբար, այս թերթն էլ չի պահպանվել: Հնարավոր է, որ այդ թերթի վրա խաչով նշված է եղել հաջորդող մեկ այլ պրակի առկայությունը:

թերթերի չափերը պետք է որ 137-138 x 215 մմ եղած լինեն (տե՛ս նկ. 2. նույն ձևով կարելի է պատկերել նախնական հայերեն ձեռագրի բոլոր քսան պրակները):

Հովհաննեսի Ավետարանի ամբողջ տեքստը բաժանված է 318 հատվածի²¹: Տեքստի մեջբերման համակարգը հատվածների թիվն ու առանձին հատվածների երկարությունը, չեն համընկնում, այսպես կոչված, «Եվսեբիոսի կանոնական աղյուսակներում» եղած և բազմաթիվ ձեռագիր Ավետարաններում հանգես եկող դասավորության հետ²²: Այդ դասավորությունն ապատակն էր՝ հեշտացնել Ավետարանների համապատասխան հատվածների զուգագրումը: Ակնհայտ է, որ մեր ձեռագրի հեղինակն այդպիսի խնդիր չէր հետապնդում: Այն գուտ մեկ Ավետարանի կամ չորս Ավետարանների ընդօրինակություն չէ:

Մեր այժմյան գիտելիքները թույլ չեն տալիս որևէ կերպ մեկնաբանել Հովհաննեսի Ավետարանի՝ ձեռագրում կիրառված հատվածաբաժանումը: Քանի դեռ ձեռագրի ժանրն ու նպատակը հստակորեն պարզված չեն, հարցը բաց է մնալու: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ այս կրկնագրում առկա է հատվածատման մի շատ հին համակարգ, որը սկզբնական տեքստը ջնջելու պահին արդեն հնացած էր: Հատվածների մեծ մասի համառոտությունը, գրվածքի յուրօրինակ ժանրի հետ մեկտեղ, ապացույց են, որ Ավետարանական այս տեքստը չի օգտագործվել եկեղեցական արարողությունների ժամանակ ընթերցելու համար: Այն հաճախ տարբեր շեղումներ ունի Ձոհրապյանի Աստվածաշնչից, ինչպես և իրեն ժամանակով մոտ էջմիածնի Ավետարանից (989 թ.)²³: Այդ շեղումներն էական չեն, սակայն հետաքրքրական են և ուշադրություն արժանի: Դրանք կարող են որոշ լույս սփռել հայերեն Հովհաննեսի Ավետարանի տեքստի պատմություն վրա: Մի փոքր հատվածի քննությունը պարզաբանենք ասվածը.

- | | |
|------|-----------------------------------------------|
| 211բ | [1] իսկ հրեայքն որ եին ի տա[ն]՝ [Հովհ. ԺԱ 31] |
| | [2] անգ. եւ մխիթարեին՝ |
| | [3] գնոսա՞. իբրեւ տեսին |
| | [4] գմարիամ թե՞ յարեաւ |
| | [5] վաղվաղակի եւ գնաց. |
| | [6] գնացին եւ նոքա գհետ |
| | [7] նորա. համարեին՝ թե՞ |
| | [8] ի գերեզմանն երթայ. |
| | [9] զի լացցէ անդ. |
| 212ա | [10] վասն մխիթարութեան. |

²¹ Կարելի է միայն ենթադրություններ անել՝ արդյո՞ք այս թիվը կապ ունի Նիկիայի ժողովին մասնակցած հայերի (սիմվոլիկ) թվի հետ, թե՞ ոչ. և ինչո՞ւ չենց Հովհաննեսի Ավետարանը:

²² Հմմտ. Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին, որում նա մեկնաբանում է իր կանոնական աղյուսակների դասավորությունը: Նամակը տպված է հունարեն Նոր Կտակարանի՝ Նեստլի և Այանդի քննական հրատարակության ներածության մեջ: Այդ դասավորության համաձայն՝ Հովհաննեսի Ավետարանը բաժանված է տարբեր երկարություն 323 հատվածի:

²³ Այս ձեռագիրը նմանահանությունը հրատարակվել է Գրացում: Տե՛ս նաև H. und H. Buschhausen, A. Mat'evosyan. Codex Etschmiaszin. Vollständige Faksimile-Ausgabe von Codex 2374 des Matenadaran Mesrop Masroc' in Erevan. Kommantar, Graz, 2001.

Հատվածը Համեմատվել է Զոհրապյանի Աստվածաշնչի [= Z] և էջմիածնի Ավետարանի [= E] հետ: Տարբերությունները հետևյալն են. ա) E [203բ], Z որ էին ընդ նմա ի տան, բ) Z մխիթարէին, գ) E, Z գնա, դ) Z թէ, ե) Z Համարէին, զ) Z թէ: Կարելի է հեշտությամբ նկատել, որ տարբերակների մեծ մասը վերաբերում է առանձին բառերի ուղղագրությանը, առաջին հերթին է-ի, ամենից հաճախ անկատար անցյալի ձևերում: Ավելի կարևոր են բնագրային տարբերությունները: Այս կարճ հատվածում կան երկու այդպիսիք՝ ա) և գ): Տող [1]-ում բաց է թողնված «ընդ նմա»²⁴ ընթերցումը, տող [3]-ում, հավանաբար գործ ունենք սխալի հետ, քանի որ կրկնագրի «զնոսա» հոգնակի հայցականը ոչ մի իմաստ չունի: Երբեմն տարբերություններ են հանդիպում նաև շարահյուսական կառուցվածքում, մասնավորապես բարդ ժամանակաձևերի շարադասության մեջ: Օրինակ՝ «չեւ եւս եկեալ էր» (ԺԱ 29), Z, E-ի «էր եկեալ»-ի փոխարեն (տե՛ս նաև ԺԱ 32, 37, ԺԹ 34 և այլն): Բացի այդ, կրկնագրում գոյականի փոխարեն երբեմն դերանուն է հանդես գալիս, օրինակ՝ «նա» փոխանակ «Յիսուս» (ԺԱ 29): Պատահում են և գրչական սխալներ, օրինակ՝ ը-ի բացթողումը «ճանապարհ» բառում (ԺԴ 5 և 94բ-ի՝ աստվածաշնչային տեքստին վերաբերող նշումների մեջ): Հաճախ Z, E-ում և կրկնագրում հոգով կամ առանց հոգի գոյականների ձևերը չեն համընկնում:

Աստվածաշնչային տեքստը ծագում է մի փուլից, որում բնագրային ավանդույթը դեռևս այնքան կայունացած չէր, որպեսզի արդեն հանգեցրած լիներ ներկայումս հայտնի տարբերակների առաջացմանը, առավել ևս՝ որպեսզի դրանք հետագա կյանք չունենային²⁵: Թե որքան նշանակալի են տարբերությունները, հնարավոր կլինի ասել միայն կրկնագրի տեքստի ընթեռնելի հատվածների ամբողջական ուսումնասիրությունից հետո: Այստեղ դեռ բավական աշխատանք է մնում անելու:

Աստվածաշնչի տեքստին²⁶ վերաբերող նշումները (Notizen)²⁷ ձեռագրում տարբեր երկարություն ունեն (մինչև երեք տող): Դրանք միշտ տեղադրված են էջի ստորին կեսում, նաև այն դեպքերում, երբ վերին կեսում բավարար տեղ կա: Բերենք նշումների օրինակներ.

– որոշ նշումներ շատ կարճ են. «Անակնկալի շահ» (119բ, Հովհ. Բ 7-8), «Վասն մխիթարութեան» (211բ, Հովհ. ԺԱ 31),

– կան ընդհանուր բնույթի նշումներ. «Պարտ է քեզ գոհանալ զիրացդ» (5ա և 5բ, Հովհ. Զ 21-22 և Զ 23-24)²⁸, «Յակնկալութենէ բարի իրք լինին

²⁴ Նման բացթողում (ΜΕΤ' ΑΥΤΗΣ-ի) արձանագրված չէ Հովհաննեսի Ավետարանի հունարեն բնագրի տարբերություններում:

²⁵ Հավանաբար, գրանով է բացատրվում, թե ինչու այս ձեռագիրը հետագայում չի օգտագործվել:

²⁶ Կրկնագիր ողջ ձեռագրի հայերեն հիմնական տեքստը վերծանելուց հետո այժմ աշխատում ենք նշումներն (notitiae) ընթերցելու ուղղությամբ: Դրանք էլ հիմնականում վերծանվում են: Իհարկե, դրանք մի գգալի թիվ կամ բոլորովին ընթեռնելի չէ, կամ էլ ընթեռնելի է միայն մասամբ:

²⁷ Այս բառն օգտագործում ենք պայմանականորեն: Հնարավոր է, որ ձեռագրի հետագա ուսումնասիրության ընթացքում ստիպված լինենք այն փոխել:

²⁸ Այստեղ հետաքրքրական է գոհություն գաղափարը, քանի որ հայերեն Զ 23-ում բացակայում է հունարենի εὐχαριστήσαντος τοῦ κυρίου հատվածը [«այն տեղի որ զհացն կերան»-ից հետո]: Այն բաց է թողնված նաև հունարեն և ստորերեն մի քանի ձեռագրերում:

Հանդերձ շահիւք» (119ա, Հովհ. Բ 9-10), «Անակնկալ իրք լինին» (88բ, Հովհ. Գ 7-8), «Զոր խնդրեսդ գտանես» (280բ, Հովհ. ԺԵ 16),

– դրանք հաճախ ուղղված են մի երկրորդ անձի և կարող են ընկալվել որպես խրատներ. «Մի լինիր անհաւատ» (50բ, Հովհ. Թ 18), «Մի անհաւատ ասացելոցդ քեղ» (69ա, Հովհ. Գ 12-13),

– դրանց ձևակերպումը կարող է միայն հեռավոր առնչություն ունենալ վերորերյալ ավետարանական տեքստի հետ. «Բարի է կոչումն երթ» (120բ, Հովհ. Բ 1-2),

– օգտագործված բառերը կարող են առհասարակ առնչություն չունենալ Աստվածաշնչի տեքստի բառապաշարի հետ. «Բարեկամութիւն եւ սէր» (213ա, Հովհ. ԺԷ 21-23): «Բարեկամութիւն» եղբւր ոչ մի անգամ վկայված չէ Հովհաննեսի Ավետարանում:

Ինչպես վերն ասացինք, Աստվածաշնչի տեքստին վերաբերող այս նշումները կարևոր նշանակություն ունեն ձեռագրի ժանրն ու կիրառությունը հասկանալու համար: Տպավորություն է ստեղծվում, թե ինչ-որ մեկը պարզապես նշումներ է արել իր կամ էլ ուրիշների համար: Դրանք կարող են քարոզչի և Աստվածաշնչի տեքստի միջև լուռ երկխոսություն արտահայտություն լինել, ունեն ուսուցողական կամ խրատական երանգ: Սակայն առայժմ սա զուտ ենթադրություն է: Նշումները դեռևս լիովին ընթերցված և ուսումնասիրված չեն:



Նկ. 3. 278բ, նմուշ:

Ձեռագիրը գրված է գեղեցիկ երկաթագրով՝ գրելու ուղղությամբ միշտ թեթևակի թեքված: Առանձին տառեր, իրոք, նրբագեղ են: Գիրը թվում է նման Մատենադարանի 6200 (887 թ.) ձեռագրի գրին, թեպետ դրանք, անկասկած, տարբեր ձեռքերի աշխատանք են: Ձեռագիրը բավական կանոնավոր է: Բոլոր հատվածները՝ հիմնական տեքստը, նշումները, հատվածների համարակալումը, վկայում են նույն խնամքով գրելաոճի մասին: Առանձին տառերի տողից ներքև իջնող մասերը գրված են ձեռքի լայն շարժումով, սակայն մազի պես բարակ հորիզոնական գծիկները շատ տեղերում այլևս հստակ չեն նշմարվում: Այստեղ աշխատել է մի հմուտ, փորձառու ձեռք (տե՛ս նկ. 3):

Որոշակի առանձնահատկություն ունի «այլ» բառը: Դրա վերջին տառը միշտ «զ» է՝ «այլ»: Այդպիսին է գրությունը և էջմիածնի Ավետարանում: Սակայն տառերի թվային արժեքը միշտ հստակ պահպանվում է՝ $լ = 30$, և $զ = 90$:

Որոշ դեպքերում, ավելի հաճախ՝ տողի վերջում (օրինակ՝ 281ա՝ 3-րդ, 11-րդ և 13-րդ տողեր), մեկ տառ պատկերված է սովորականից փոքր և բարձր՝ տողի երկարությունը չխախտելու համար: Երբեմն դա կարելի է

բացատրել նաև որպես սխալի ուղղում: Տեքստի հատկապես վերին մասի ընդհանուր տեսքը վկայում է, որ գրիչը գուրկ էր եղել էսթետիկական զգացումից: Երբ որևէ տան վերջին բառը տեղափոխվել է հաջորդ տող, ապա այն գրվել է այդ տողի մեջտեղում: Դա ստեղծում է նրբաճաշակ սիմետրիկութայն տպավորություն: Բոլոր տների սկզբնատառերը մեծ չափերի են, այնպես որ դրանք երբեմն հասնում են մի քանի տող ներքև: 318 աստվածաշնչային հատվածները համարակալված են նույն ձևով, ինչպես և մնացյալ տեքստը, սակայն թվերն ավելի փոքր չափերի են: Շատ տեղերում կիրառված է «պատիվ» նշանը՝ հորիզոնական մի գիծ տառերի վերևում՝ դեպի վերև և ներքև թեքված գծիկներով: Հապավված բառերն են՝ «Յիսուս», «Քրիստոս» և «Տէր»: Վերացական գոյականների «-ութիւն» ածանցը միշտ լրիվ է գրված: Չեռագրում տեսանելի է կետադրութայն զարգացման որոշ աստիճան: Ամենից հաճախակի կիրառված նշանը տառի բարձրության կենտրոնում դրված կետն է: Այն ծառայում է նախադասության, տան կամ կարճ իմաստային միավորի ավարտը ցույց տալու համար: Մեկ կամ երկու անգամ հանդիպում է երկու կետ, առանձին դեպքերում նկատելի է ստորակետ: Կետադրութայն մեջ որևէ կանոնավորություն հնարավոր չէ տեսնել, քանի որ, նույնիսկ եթե նշաններ կիրառվել են, դրանք այսօր նշմարելի չեն: Այն հանգամանքը, որ ձեռագրում կան տարբերակված կետադրական նշաններ, հիմք է տալիս բացառելու դրա շատ վաղ թվագրումը:

23-րդ թերթում նկատվում են մագաղաթի բավական վաղ նորոգման հետքեր: Թերթի ներքին եզրին սոսնձված են երկու համարյա քառանկյունի, 3 x 9 սմ չափեր ունեցող կտոր: Ուլտրամանուշակագույն լույսի տակ հնարավոր եղավ պարզել, որ այն, ինչ սկզբից պարզապես բիծ էր թվում, իրականում տեքստի պատառիկ է: Սոսնձված երկու կտորների վրա էլ (23ա, բ), 6-րդ և 7-րդ տողերի սկզբում, կարելի է նշմարել մեկից երեք տառ: Գիրը հունարեն մայրուսկուլ է²⁹: Առանձին տառեր աղտոտման և մաշվածության պատճառով հազիվ ընթեռնելի են: Դժվար կլինի պարզել այս տեքստի ինչ լինելը:

Այս ձեռագրի պատմության վրա նոր լույս կսփռի հնագրագիտական նկարագրությունը: Հավանաբար, ելակետեր կստանանք նաև թվագրման համար: Դրքի նորոգման տվյալներով էլ, հնարավոր է, կարևոր հետևություններ արվեն սոսնձման ժամանակի մասին: Մագաղաթը, անկասկած, նորոգվել է հայերեն տեքստը գրելուց հետո, քանի որ Աստվածաշնչի տեքստը մեկնաբանող նշումներում առնվազն մեկ տառ ծածկված է սոսնձված պատառիկով:

Մագաղաթի ճշգրիտ թվագրման խնդիրը շատ բարդ է: Հնարավոր է միայն անուղղակի կովանների վրա հիմնված թվագրում, չնայած որ կա մի քանի ելակետ:

Վրացերեն տեքստը. մագաղաթի վրա կրկին գրված տեքստի ժամանակը *terminus ante quem* է մեզ համար: Այդ մասին, սակայն, տարբեր կարծիք-

²⁹ Մեր գործընկեր Ֆյոդոր Պ. Պոլյակովի (Մյունխեն-Մոսկվա) առաջին ինքնաբերական տպավորությունը գրանից հետևյալն էր. «Սա Սինայում կիրառության մեջ եղած հին ծիսական մայրուսկուլ է»:

ներ են հայտնվել: Ցագարելիի կարծիքով վրացերեն տեքստը գրվել է VIII–IX դդ., իսկ ըստ Շանիձեի՝ X դ. առաջին կեսին³⁰: Այդ տեսակետների հիմքը, ըստ երեույթին, հնադրական տվյալներն են: Իմնաիշվիլու հաղորդումն այն մասին, թե 260-րդ թերթի վրա կարելի է կարդալ գրիչի անունը՝ «Սերապիոն», չի համապատասխանում իրականությանը³¹: Գրիչի անունը գտնվելու գեպքում թվագրումը ստույգ կդառնար, եթե այդ անունը հայանի լիներ նաև ձեռագրից: Կարող ենք, անշուշտ, X դ. առաջին տասնամյակն ընդունել իբրև *terminus ante quem*: Թվագրման համար ուրիշ կովաններ պետք է փնտրել բուն կրկնագրի ներքին առանձնահատկությունների մեջ:

Գրչությունը. Հնագրական համեմատության արդյունքները, հատկապես Մատենադարանի 6200 ձեռագրի հետ նմանությունը, թույլ չեն տալիս խոսել հայերեն նախնական տեքստի վաղ թվագրման մասին: Այս եզրահանգումը հաստատվում է համեմատաբար զարգացած կետադրությամբ:

Տեքստի բաժանումը հատվածների. ավետարանական ողջ տեքստը 318՝ ոչ մեծ միավորների բաժանված լինելը ձեռագրի այն առանձնահատկությունն է, որը, հավանաբար, կարելի է զուգադրել սակավաթիվ ուրիշ վրացյությունների հետ: Նման բաժանումն, անկասկած, ներկայացնում է մի հին՝ ոչ բավականաչափ հայտնի ավանդություն:

Պատառիկը. շատ քիչ բան է հայտնի սոսնձված հունարեն պատառիկի մասին, որպեսզի կարողանանք գրանից որևէ որոշակի տեղեկություն քաղել: Այդուհանդերձ, այն դեռևս կարող է օգնել ձեռագրի թվագրմանը, հավանաբար՝ նաև այն վայրը որոշելուն, որտեղ վրացերեն տեքստը դրվել է:

Ուսումնասիրության ներկա փուլում խնդրո առարկա կրկնագիր ձեռագիրը կթվագրեինք IX դ.: Այսինքն՝ հայերեն գրված մագաղաթն առաջին օգտագործումից համեմատաբար քիչ ժամանակ անց կրկին օգտագործվել է վրացերեն սաղմոսարանի համար: Իսկ հայերեն տեքստը, թվում է, այդ ժամանակից շատ ավելի վաղ է հորինվել:

Հարց է ծագում. ինչու՞ է որևէ տեքստ ջնջվում, ինչու՞ այն այլևս պետք չէ: Դա կարող է ունենալ ինչպես ամենասովորական (բանալ), այնպես էլ յուրօրինակ պատճառներ: Երկուսի համար էլ խնդրո առարկա ձեռագրում ելակետեր կան: Դրանք կարելի է ամփոփել մեկ-երկու նկատառումով.

– Ձեռագիրը հայտնվել էր վրացի գրչի ձեռքում, որի համար հայերեն տեքստն անարժեք էր:

– Ձեռագրի կեսը (յուրաքանչյուր թերթի ստորին մասը) գերծ է տեքստից, չհաշված համառոտ նշումները: Այդ փոքրածավալ գրառումները հեռացնելու համար շատ ջանքեր չէին պահանջվում:

³⁰ Նրանց հայացքների ամփոփումը տե՛ս W. Imnaischvili, Jubiläumsband, S. 188.

³¹ Ենթադրում ենք, որ գեռևս չգտնված անունը ձեռագրի մեկ այլ էջում է:

– Աստվածաշնչյան տեքստն արարողակարգային ընթերցումների համար կիրառելի չէր, իսկ հարկ եղած դեպքում Հովհաննեսի Ավետարան, անշուշտ, կարելի կլիներ գտնել գրադարանում:

– Գրքի ժանրը՝ Ավետարանի հատվածները համառոտ դիտողութուններով, հավանաբար, առանձին անհատից կամ ուսուցիչ-աշակերտ շրջանակից դուրս որևէ մեկի համար այլևս պիտանի չէր:

Ամփոփենք. առաջին հերթին պետք է ուսումնասիրել գրական ժանրը: Քանի դեռ որևէ ուրիշ ձեռագրում չենք գտել նմանատիպ գրվածք, խնդրո առարկա հայերեն տեքստը պետք է համարել բացառիկ: Այն պետք է ծառայեր որոշակի նպատակի, ամենայն հավանականությամբ, աստվածաբանական քարոզի, հավանական է նաև ուսուցողական նպատակների: Գուցե մեզ, ի վերջո, հաջողվի առավել մանրամասն պատկերացում կազմել միջնադարյան դպրոցի մասին:

Ձեռագիրը, անկասկած, կարևոր է Աստվածաշնչի հայերեն տեքստի պատմության համար: Դեռևս չլուծված հարցերով լեցուն ծավալուն բնագրի հետագա քննությունը ցույց կտա, թե հայերեն Աստվածաշնչի պատմության ո՞ր հատվածում պետք է գետեղել այս ընդօրինակությունը:

Եթե հնարավոր լինի ճշգրտել կրկնագրի ժամանակը, ապա հայկական հնագրության համար կունենանք շատ արժեքավոր նյութ: Մ. Սթոունի, Տ. ԿուլումՋյանի և Հ. Լեմաննի վերջերս հրատարակված հիմնարար աշխատությունն³² սկսվում է ամենավաղ թվագրված՝ IX դ. ձեռագրով: Բացի այդ, չավագանց կարևոր է կազմը, այսինքն՝ կազմելու տեխնիկան: Կազմն ընդհանուր առմամբ պահպանվել է, թեև ոչ ամբողջովին: IX–X դարերից շատ քիչ գրքեր են պահպանվել, որոնց միջոցով հնարավոր լիներ ուսումնասիրել կազմելու տեխնիկան (հավանաբար, թվագրման առումով, կազմի ուսումնասիրությունը վճռորոշ նշանակութուն կունենա խնդրո առարկա ձեռագրի համար):

Ինչպես հետևում է ողջ ասվածից, բազում հարցեր դեռևս պարզաբանված չեն: Վերջերս է միայն հաջողվել վերծանել ձեռագրի նախնական կառուցվածքը: Էջերի բովանդակությունն ընթերցվել է Ձոհրապյանի Աստվածաշնչի համեմատությամբ: Հստակ է, որ վրացական ձեռագրի համար հայերեն ձեռագրից բացի որևէ այլ գրելանյութ չի օգտագործվել:

Նախ և առաջ պետք է ստուգել վրացերեն տեքստի ամբողջականությունը. արդյո՞ք այն ամբողջական է, թե՞ թերթեր են պակասում: Առանձին հարց է վրացերեն ձեռագրի առաջին չորս թերթը: Դրանք կցվել են հետագայում: Իսկ ի՞նչ է եղել դրանց տեղում մինչ այդ:

Մտադիր ենք լիովին նկարագրել ձեռագիրը և հրատարակել տեքստը քննական մեկնություններով: Դրա համար անհրաժեշտ է ձեռագիրը համեմատել ժամանակակից բնագրային այլ վկայությունների հետ:

Գերմաներենից թարգմանեցին
Գոհար Մուրադյանը և Արամ Թոփչյանը

³² M. E. Stone, D. Kouymjian, H. Lehmann. Album of Armenian Paleography. Aarhus University Press, 2002.

АРМЯНСКИЙ ПАЛИМПСЕСТ ИЗ УНИВЕРСИТЕТСКОЙ
БИБЛИОТЕКИ В ГРАЦЕ

ЭРИХ РЕНХАРТ (Австрия)

Р е з ю м е

Рукопись № 2058/2 из университетской библиотеки в Граце — армянский палимпсест. Вероятно, в начале X в. на пергамене был заново написан грузинский текст книги Псалмов. Литературная форма первоначального текста очень интересна: это древняя версия Евангелия от Иоанна, снабженного небольшими заметками — доселе неизвестный литературный жанр. Есть некоторые данные, позволяющие датировать первоначальную рукопись IX в. Автор в настоящее время готовит к публикации полный текст с критическими замечаниями и всесторонним кодикологическим анализом.

THE ARMENIAN PALIMPSEST OF THE LIBRARY OF GRAZ UNIVERSITY

ERICH RENHART (Austria)

S u m m a r y

Manuscript № 2058/2 of the library of Graz university is an Armenian palimpsest. Probably in the early 10th century, the Georgian translation of the Psalms was overwritten on the parchment. The literary genre of the original text is very interesting and hitherto unknown: it is an old form of John's Gospel endowed with short notes. Some data allow us to date the original manuscript to the 9th century. The writer is currently preparing the complete Armenian text for publication with critical apparatus and thorough codicological analysis.